ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 3, 1959 Общественные науки

Հ. Մ. Փուրտուճյան

Մ. ՄԵԾԱՐԵՆՑԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԸՄԲՌՆՄԱՆ ՄԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մ. Մեծարենցի ստեղծագործական քանքարի բնորոշ առանձնահատկություններից է բանաստեղծական ըմբռնման պատկերայնությունը: Նրա բանաստեղծական գրիչը բնութագրվում է որքան խոր լիրիզմով, անմիջականությամբ և հուզականությամբ, նույնքան և նկարչականությամբ, գույների և լույսերի նրբազգայությամբ և տարբեր զգայարանների միջև գոյություն ունեցող բազմապիսի կապերն արտացոլելու արտասովոր վարպետությամբ։

Բանաստեղծական պատկերները վերլուծելիս տարբեր զգայարանների փոխադարձ ներգործման հոգեբանական օրինաչափությունների բացահայտումը արդյունավետ մեթոդ է որոշելու և գնահատելու ինչպես արտարին աշխարհը բանաստեղծորեն զգայելու ձևերը, այնպես էլ բանաստեղծական պատկերներ ստեղծելու արվեստի դժվարին տեխնիկան։

Զգայարանների միջև գոյություն ունեցող փոխադարձ կապակցություններն իրենց օբյեկտիվ արտացոլումն են գտնում հոգեբանական և ֆիզիոլոգիական գրականության մեջ հայտնի սինեսթեզիայի երևույթի մեջ։ Սովետական հոգեբաններից հատկապես Ս. Վ. Կրավկովը, Կ. Խ. Կեկչեյանը, Ե. Ն. Սեմենովսկայան, Լ. Ա. Շվարցը և ուրիշներ հավաքել են փաստական հարուստ նյութեր և բացահայտել զգայարանների փոխադարձ ներգործման և սինեսթեզիայի հետ կապված մի շարք կարևոր օրինաչափություններ։ Սինեսթեզիայի երևույթը դեռևս անցյալ դարի վերջերին հատուկ ուսումնասիրությունների առարկա է դարձել նաև արևմտաեվրոպական մի շարք հետազոտողների կողմից (Ֆեխներ, Նուսպաումեր, Ռիբո, Ֆլուրնուա, Կլապարեդ)։

Սինեսթեզիայի առաջացման ժամանակ մի զգայարանի գրգռումը առաջացնում է, մի կողմից, համապատասխան զգայություն, իսկ մյուս կողմից, մի այլ, կողմնակի զգայություն կամ մտապատկեր՝ կապված մի ուրիշ զգայարանի գործունեության հետ։ Սինեսթեզիայի առաջացման ժամանակ գրգռիչներն ունենում են երկակի ներգործում, մեկը՝ այդ գրգռիչի համապատասխան զգայություն, և երկրորդը՝ դրա հետ առավել կամ նվազ կապված մի այլ զգայարանի համար բնորոշ զգայություն։ Շատ հաճախ այս կամ այն երևույթը կամ տպավորությունը բնորոշելու և ավելի զննական դարձնելու համար մենք դիմում ենք ոչ միայն մի, այլև երկրորդ զգայարանին։ Այսպես, օրինակ, շատ անգամ գործածում ենք այնպիսի պատկերավոր արտահայտություններ, ինչպիսիք են «բյուրեղյա ձայն», «սառը գույն», «քաղցր երազ», «գունեղ երաժշտություն», «խոսուն աչքեր», «թթված դեմք», «ոսկի հեքիաթ», «անուշ ժպիտ» և այլն։ Ինչպես նկատելի է, մի երկրորդ զգայարանի միջոցով ստացած զգայական պատկերը՝ գույնը կամ ձայնը, համը կամ սառնությունը ամրապնդում և ավելի ուժեղ է դարձնում առաջին զգայարանի միջոցով ստացած տպավորությունը և նրա բառային արտահայտությունը։

Սինեսթեզիական տարբեր պատկերների առաջացումը պայմանավորված է հիմնականում մարդու խառնվածքային առանձնահատկություններով։ Խառնվածքի գեղարվեստական տիպին պատկանող մարդիկ, որոնց մոտ գերիշխում են պատկերային մտածողությունը, էմոցիոնալ տպավորություններն ու բռնկումները, հակում ունեն երևույթների նկատմամբ սուբյեկտիվ, զգացմունքային ուժեղ վերաբերմունք ցուցաբերելու։ Ստեղծագործական երևակայության և զգացմունքների ուժով նրանց մոտ առաջանում են պատկերների և զգայական բարդ ներգործումների անսովոր զուգորդումներ։

Ինչպես հայտնի է, ռուս կոմպոզիտորներից Ռիմսկի-Կորսակովը, Սկրյաբինը, Ասաֆիևը օժտված են եղել զարգացման բարձր աստիճանի հասած «գույնային լսողությամբ» (ֆոտիզմով)։ Ռիմսկի-Կորսակովը բացառիկ զգացողություն է ցուցաբերել ֆոտիզմի նկատմամբ։ Երաժշտական տարբեր տոնայնություններ նրա մոտ շաղկապվել են գույնային տարբեր զգայությունների հետ։ Այսպես, օրինակ, դո-մաժորը կապված է եղել սպիտակի, ֆա-մաժորը՝ կանաչի, լյա-մինորը՝ բաց վարդագույնի, իսկ լյա-բեմոլ-մաժորը՝ մեղմ մանուշակագույնի հետ։ Նրա գույնային լսողության համար բնորոշ է եղել նաև տարբեր ձայնային տոների զուգորդումը զգացմունքային տարբեր վիճակների և բնանկարների մտապատկերման հետ (երազային, գարնանային, սլաստորալ, արշալույսային և այլն)։ Սինեսթեզիական պատկերները յուրահատուկ տեղ են գրավել Ռիմսկի-Կորսակովի երաժշտական-նկարչական մտածողության զարգացման մեջ։

Հատկանշական են նաև ակադեմիկոս Բ. Ասաֆիևի[1] նշումներն իր սեփական սինեսթեզիայի առանձնահատկությունների մասին։ Իր գույնային և տոնային զգայությունները «մանկությունից բնածին» համարելով, նա ասում է, որ բեմոլ տոնայնություններից սի-բեմոլ-մաժորը իր մոտ առաջացրել է փղոսկրի գույն, մի-բեմոլ-մաժորը՝ երկնագույն և լազուր, լյա-բեմոլ-մաժորը՝ բալի կարմիր, դիեզ տոնայնություններից սոլ-մաժորը իր մոտ զուգորդված է եղել զմրուխտ կանաչի, ռե-մաժորը՝ արևափայլ շողերի, մի-մաժորը՝ աստղազարդ երկնքի զգայության հետ և այլն։

Անհրաժեշտ է նշել, որ մեր կատարած նախնական պրպտումները Պ. Դուրյանի, Վ. Տերյանի, Դ. Վարուժանի և Ե. Չարենցի ստեղծագործություններում ցույց են տալիս, որ նրանց բանաստեղծական ըմբռնման մեջ սինեսթեզիան որոշակի առանձնահատկություն է կազմում։ Տերյանի համար հեքիաթը տսկի է, լուսեղեն, երազը՝ արծաթի, կապուտաչյա։ Նրա մի շարք բանաստեղծություններում («Անծանոթ աղջկան», «Հիվանդ» և այլն) մենք դիտում ենք լսողական և տեսողական զգայությունների զուգորդումներ («Լույս հնչյուններ»), այսպես, օրինակ.

Աղջիկն անուշ հեքիաթի պես
Իր լույս երգով ժպտում էր մեկ։

Կամ՝

Մի լույս երգ է իմ հոգում ննջել...։
(Ընդգծումները մերն են — Հ. Թ.)

---

[1] Б. Асафьев, Встречи и раздумья, журн. „Советская музыка", № 1, 1955, стр. 57.

Հուզական տարբեր տրամադրություններն և տպրումների ժամանակ փոխվում է Չարենցի դունաղդայությունը։ «Երջանկության առաստաղը կապուտաչյա» է նրա համար. հոգին՝ մանուշակագույն, մտրմորը և կարոտը՝ կապույտ, հըմայքը դեղին, իսկ երկունքը՝ կարմիր։ Գունաղդայության այս առաջացումն իր մեջ պայմանական կամ ձևական ոչինչ չունի, այլ բանաստեղծական մտածողության և ապրումների յուրահատկություն է՝ կապված ստեղծագործողի խառնվածքային կերտվածքի և զգայաձևերի հետ։

Հայ քնարերգության պատմության մեջ Մեծարենցի օգտագործած ինքնուրույն և հարուստ բառապաշարը բերեց նորություն ու թարմություն այն պատճառով, որ նրա ինքնատիպ զգացողության ձևերն ու միջոցները պարտադրել են արտահայտման նոր եղանակներ, մինչև այդ չօգտագործված պատկերներ ու բառեր։ Այդ նոր բառերը՝ թրծվելով նրա բանաստեղծական զգացողության խառնարանում, ստեղծել են տեսողական, լսողական և հոտառական բնույթի նոր պատկերներ։ Մեծարենցի արվեստի համար այնքան բնորոշ հանդիսացող բանաստեղծական հազվագյուտ բառապաշարը վկայում է նրա լեզվի և ոճի ինքնատիպության, նրա նրբահյուս զգայությունների և զգացմունքների ինտենսիվության ու հարստության մասին։

Լույսի և մութի, ձայների և դույների, բույրերի և ձևերի սրտասուղ զգացողությունը Մեծարենցին դարձրել է բնության մեծաստաղանդ երգիչ և նկարիչ։

Եկո՜ւր, անցնինք ծառաստանեն այս Լույսին,
Ու բացատքեն Գույնին, Ձևին տ ու Բույրին,
Եկո՜ւր, Հոգի՜ս, եկուր երթանք միասին,
Մինչև եդեմն աստվածաձայն, մինչև Կի՛ն...։ (2)

Այս քառյակը բանաստեղծական ապրումի գեղարվեստական կերտումը չէ միայն, այլև մեծարենցյան քնարերգության համար ելակետային նշանակություն ունեցող էսթետիկական հայացք, որն ավելի պարզ ու բնորոշ է դառնում հետևյալ տողերի մեջ. «Ես պիտի թրթռամ, տերևներուն հետ, թռչուններուն հետ, հովին հետ. բոլոր ձայներուն, բոլոր երանգներուն, բոլոր բուրումներուն հետ, ես տակավին պիտի սարսռամ հոս իմ երգս, ուռիներու շուքին տակ, դալարաստվեր հովտին ծոցը» (էջ 212)։

Մեծարենցի բանաստեղծական ինքնատիպ խառնվածքի էությունից և զգայական հարուստ փորձից են բխում նրա ջերմաշունչ բաղձանքները «ըլլալու» լույս ու ձև, երանգ ու թրթռում, երգ ու բույր և նույնանալու բնության կյանքի հետ։ Բնության բազմապիսի ու խոր զգացողությունը նրա լուսահորդ ու գունագեղ բանաստեղծությունների մեջ անզսպելի ուժով ստեղծել է ոտանավորից ոտանավոր հայտնվող տեսողական, լսողական, հոտառական և այլ պատկերներ, որոնց անսովոր զուգորդումներից առաջացել են սինեսթեզիական թարմ ու զարմանալի զգայապատկերներ։

Սինեսթեզիայի ընդհանուր օրինաչափությունը Մեծարենցի մոտ արտահայտվում է նրանում, որ ինչպես գգացումը, այնպես և գաղափարը, խոհերը «ծփածանի երանգ» են ստանում։ Բանաստեղծության մեջ իշխող տրամադրության և բնության ներկայացրած ժամանակի ու եղանակի համաձայն, իղձը

2 Մ. Մեծարենց, Երկերի ժողովածու, 1956, Երևան, էջ 94. հետագա մեջբերումները նույն հրատարակությունից։

կամ հրճվանքը դառնում է բոսոր, ճերմակ կամ կապույտ, իսկ գաղափարը՝ սպիտակ, խոհերը՝ ծիրանի։

Սինեսթեզիայի հիմնական և ամենից ավելի տարածված տեսակը՝ ֆոտիզմը (ձայնի վերածումը գույնի, տեսողական պատկերի) նրա մոտ արտահայտվում է գույնային ամբողջական, ինքնուրույն պատկերներով։ Մեծարենցյան այդ պատկերները որքան լսողական և տեսողական (գույնային) սերտ կապակցությունների, նույնքան և ստեղծագործական վառ երևակայության անմիջական արդյունք են, որոնք յուրահատուկ դեղեցկություն և թարմություն են տալիս նրա բանաստեղծություններին։ Նրա մոտ ֆոտիզմի բնորոշ պատկերներ են՝ «...ջութակի սարսուռին գիծը կարմիր...» (էջ 72), «Երգը՝ իղձի և հառաչի թել մըն է հիր» (էջ 98), «Վառ գույներով դրասանգված երգը կյանքին» (էջ 182), «Ձայնին ժապավենը դեռ կերկարաձգվեր» (էջ 230). «Փափուկ արծաթի շավիղ մը ձայնի» (էջ 65), «Եվ երգի մուլ մը կուգա պլլրված իր դոտիին» (էջ 90), երգը «Նուրբ կամրջակ մը ոսկի» (էջ 105)։ «Ջրտուք» ոտանավորի մեջ Մեծարենցը, խոսելով «լուսնակով արբշիռ» ծղրիդների զրույցի մասին, ֆոտիզմի ուժով, մեծ վարպետությամբ ստեղծել է հետևյալ նուրբ պատկերը.

Ու կ'երկարի լուսարծաթ ժապավենն այդ բարբառին,
Ինչպես փախչող ասուպի կոթունները կաթնավետ. (էջ 9)

Զգայությունների զարմանահրաշ զուգորդումով ձայնը վերածվում է տեսանելի, շոշափելի, ինչպես և հոտավետ իրի։ «Երբեմն ալ,— ասում է Մեծարենցը,— խաղաղիկ իրիկուններ՝ կը կարծեի լսել ձայն մը համբույրներեն ավելի գգվոտ՝ որ հոգիս կը փայփայեր. երկարաձիգ, մեղեդիի սրվվոյուն մըն էր ան, բուրումնավետ ժապավեն՝ որուն հեշտութենեն ռունգերս կը սարսռային...» (էջ 229—230, ընդգծումը մերն է — Հ. Թ.)։ Այստեղ, բացի հոտի զգայությունից, մյուս զգայարանները, նույնիսկ մաշկային զգայությունը («համբույրներեն ավելի գգվոտ»), ունեն իրենց յուրահատուկ մասնակցությունը տվյալ սինեսթեզիական պատկերների ստեղծման մեջ։

Ինչպես ցույց են տվել հատուկ ուսումնասիրությունները, եթե 600 մարդուց միայն 4-ի մոտ է նկատվել ֆոնիզմը (գույնի, պատկերի վերածումը ձայնի), ապա որքան հատկանշական է, որ նույնիսկ Մեծարենցի նման սինեսթեզիայի արտաստվոր հատկություններով օժտված բանաստեղծի ողջ ստեղծագործության մեջ ֆոնիզմի հազիվ յոթ փաստ կարելի է գտնել։ Այս հանգամանքը խոստում է ոչ միայն տվյալ երևույթի իրաստ հազվադեպ լինելու, այլև այն մասին, որ նման պատկերների ստեղծումը չի եղել կեղծ, ինքնապատակ և բանագողված, ինչպես ժամանակին գտնում էին Ենովք Արմենների և Փայլակների նման «հոգեբանները» (Մեծարենց)։ Այդպիսի պատկերների ստեղծումը պայմանավորված լինելով նրա հոգերանական յուրահատկությամբ, վկայում է նրա անհատականության մի արժեքավոր կողմի մասին, որն իր որոշակի դրոշմն է դրել նրա գրական ժառանգության վրա։

Ֆոնիզմը Մեծարենցի մոտ արտահայտվում է նրանում, որ լույսը, գույնը և անհնչեղ իրը կամ երևույթը օժտված են ձայնական հատկությամբ. այսպես,

---

[3] Թել, դերձան։

օրինակ.

Ու ճառագայթներ՝
Որ զիս կը կանչեն:

Կամ՝

Եվ արևի՞ն կը սպասեմ ես ցնծապատար,
Միտքս երազով լեցուն համակ, ձեռքս ծափո՞վ,
Ողջունելու զանգակն անոր պատարագին:

(Զյունի ցնծություն, էջ 96)
(Ընդգծումները մերն են — Հ. Թ.)

Ֆոնիզմը նրա մոտ հասնում է այնպիսի աստիճանի, որ նույնիսկ մտապատկերները, հասկացությունները, գաղափարները և ապրումներն առաջացնում են բազմապիսի ձայներ։ Նրա մոտ ֆոնիզմի բնորոշ արտահայտություններից են՝ «Ծափ կզարնեն իմ հուշեր», «...ծափեցին իմ երազներս ծնծղա» (էջ 93)։

Սինեսթեզիայի հազվադեպ տեսակներից մեկն է նաև հոտառության և հասի սինեսթեզիան, որին նույնպես հաճախ ենք հանդիպում Մեծարենցի բանաստեղծություններում։ Սինեսթեզիայի տվյալ ձևի համար բնորոշ է հոտառական և համի զգայությունների և մտապատկերների առաջացումը երգային կամ առհասարակ ձայնային տպավորությունների ներգործման ժամանակ։ «Ահա՛ վասիկ իմ երգս,— ասում է բանաստեղծը,— առվեզերքի անուխին ու ռեհանին խունկովը օծուն. ահա՛ վասիկ իմ երգս, հնձված արտերուն ու հերկված հողերուն բույրովը, արևեփ խաղողներուն ու մեղրացած թուզերուն անուշույրովը ակաղձուն» (էջ 211)։ Նրա համար երգը, որ «բյուրազան բուրմունքների խուրձ մրն է» (էջ 211), ոչ միայն թելադրում է նրան դդալու կամ պատկերացնելու համն ու հոտը մրգի կամ ծաղկի, այլև նա դառնում է «բուրմունքի հեշտ երգ»։ Հետևաբար, ձայնն ու նվագը զուգորդվում են որքան նրանդների ու լուսեղեն պատկերների, նույնքան էլ «հեշտագրգիռ» բույրերի հետ։ Այս փաստը վկայում է նաև այն մասին, թե զարգացման ինչքան բարձր աստիճանի են հասել Մեծարենցի հոտառական և համի զգայարանները։ Նրա համար ամեն իր լի է բուրմունքով, իսկ՝

Գիշերն անույշ է, գիշերն հեշտագին,
Հաշիշով օծուն ու բալասանով.

(Սիրերգ, էջ 23)

Կամ՝

Համբույրիդ գիշե՞ր, պատուհանս է բաց,
Թող որ լիառատ ծծեմ հեշտագին
Կաթը մեղմահոս լույսիդ տարփանքին՝
Ու զով շողերուդ կախարդանքը թաց։

(Զմռան պարզ գիշեր, էջ 21)

Ինքնըստինքյան հասկանալի է, որ նուրբ հոտառության ու դրա հետ սերտ կապված համի զգայության լարդ կապակցությունների հիման վրա միայն կարող է առաջանալ հոտառական սինեսթեզիան՝ զուգորդվելով գույների պատճառած հուզական այս կամ այն ապրումի հետ։

Մեծարենցի մոտ սինեսթեզիայի արտահայտման առանձնահատկություն-

ներից մեկն էլ այն է, որ շատ հաճախ առանձին բառեր, որոնք արտահայտում են ինքնուրույն պատկերներ կամ գործողություններ, իրենց մեջ բովանդակում են մի քանի զգայությունների զուգորդումներ. այդպիսի բառերից են՝ ձայներիզ, երփներգել, ժպտերգել: Այսպիսի բառերը սինեսթեզիայի բնորոշ արտահայտություններ են։

Սինեսթեզիայի երևույթի այս բազմապիսի և ինքնատիպ դրսևորումները կազմում են Մ. Մեծարենցի, այս «հանճարեղ պատանու» (Ե. Չարենց) բանաստեղծական ըմբռնման ամենաբնորոշ և արժեքավոր առանձնահատկություններից մեկը, որի վրա քիչ ուշադրություն է դարձված եղել։